

օրուան Հերոսին, թերեւս վախնալով անոր դիկտատորական հովերէն... Եւ տապալեցին Կլէմանսօն, անոր տեղ ընտրելով միջակութիւն մը...

Եւ Ֆրանսայի Վագրը ընդմիշտ քաշուեցաւ հրապարակէն ու ատամները կը ճտելով, անէմքը շրթունքներուն՝ գնաց անցընելու կեանքի վերջալոյսը իր ծննդավայր Վանդէի մէջ:

* * *

Հայկական դասն եւս յանձին Կլէմանսոյի ջերմ ու համոզուած պաշտպան մը ունեցաւ ատեն մը:

Իրէյֆուսի խնդիրը փակելէ յետոյ, Aurore-ը — միշտ ազմկայոյց ու հմայքոտ, շատ կարդացուած ու տարածուած — Կլէմանսոյի թեւերուն տակ ստանձնեց նաեւ հայ դատի պաշտպանութիւնը: Եւ այն միանգամայն ինքնաբերաբար: 1899 թուականն էր. դեռ «Դաշնակցութիւնը» չէր սկսած իր բուն պրոպագանդի շրջանը: Դեռ «Պրօ Արմենիա»ն չէր հիմնուած:

«Օրօր»ի գորդներն էին գլխաւորապէս Պիէռ Բիլետո եւ Իւրրէն Գոհիէ*): Բունն արշաւանք մըն էր, որ կը մղուէր յատկապէս սուլթանի Համիտի դէմ. նաեւ Ֆրանսայի այն պաշտօնական անձերու դէմ, որոնք պատասխանատու էին հայոց դժբախտութիւններու համար: Անխնայ կը քարկոծուէր Հանստօն: Օր մըն ալ թերթերէն իմացանք, որ սուլթանի կառավար-

ութիւնը որոշեր է դատի կոչել Փարիզի մէջ իսկ «Օրօր»ի խմբագիրները: Վերջիններուս համար այդ յայտնութիւնը միայն առիթ մըն էր՝ կրկնապատկելու իրենց գրոհը եւ անոնք կը պատրաստուէին մեծ ծաւալ մը տալ սկըսուելիք դատավարութեան եւ փոել աշխարհի առջեւ հայ ժողովուրդի ողբերգութիւնն ու սուլթանական դաւերը: Ելլալը, սակայն, խոհեմութեամբ հրաժարեցաւ իր մտադրութեանէն:

Ինքը Կլէմանսօն քիչ կը գրէր: Նա արդէն իսկ այլեւայլ առիթներով յայտարարեր էր իր համակրանքը մեր դատին համար: Մեր ճակատադրով ջերմապէս հետաքրքրուողներէն էր եւ «Օրօր»ի միւս խոշոր, հեղինակաւոր գէմքը — Պրէսանսէ, որ երկար տարիներէ ի վեր կը վարէր «Թան»ի արտաքին քաղաքական բաժինը, որպէս ամենէն զիտուն Ֆրանսացի հրապարակագիրը համաշխարհային քաղաքականութեան մեծ խնդիրներու մարդին մէջ: Այդ մարդը, զոր մահը վաղաժամ խլեց հայասէրներու եւ հայ յեղափոխականներու գաղափարային գերդաստանէն, սկիզբները նախապաշարուած էր մեղի հանդէպ եւ մինչեւ իսկ երբեմնապէս Cosmopolis միջազգային հանդէսին մէջ (1898-99 թ.) քարեր կը նետէր հայկական շարժման դէմ: Հայութեան թշնամիները այն օրերուն եռանդով կը տարածէին, թէ իբր Ռուսաստանի մատր կայ հայ յեղափոխական շարժումներու մէջ: Փարիզի մէջ հրատարակուող «Մէշլէրէք»ը, Ահմէդ Ռիզայի խմբագրութեամբ, այդ ճարպիկ ու վտանգաւոր խաղի գլուխն էր: Երբ առաջին անգամը ներկայացայ Պիէռ Բիլետոն, անոր առաջին հարցումը ատոր մասին էր. ակներեւ էր, որ ինքն ալ չափով մը հաւատ կ'ընծայէր այդ զղուելի գաղտասուքներուն...

Հաւատ կ'ընծայէր — ո՛վ զարհուրանք — անդամ գերման Սոցիալ. Դեմոկրատիայի պարագլուխ եւ «Փօրվերց»ի խմբագրապետ ծերունի Լիբկնիխտ: Նա պէտք ալ չունէր «Մէշլէրէթ» կարդալու, իրեն համար վաղուց որոշուած խնդիր մըն էր — դեռ Մարքս ըսեր էր 70-ական թուերուն — թէ թուրքական Արեւելքի այստամբական բոլոր շարժումները կը կատարուին ցարական Ռուսիոյ նախաձեռնութեամբ եւ ռուսական զբամով: Հետեւաբար,

*) Այս մարդն եւս — Ֆրանսայի տաղանդաւոր ժողովրդականներէն — ատեն մը փայլեց իր հայանապաստ գործունէութեամբ (նա այսօր միակ ողջ անդամն է «Օրօր»ի նշանաւոր ուխտին, Պրէսանսէի, Վօգանի, Բերնար Լազարի, Բիլետոի, Կլէմանսօի մահէն վերջ) — եւ օր մը նոյնիսկ մեր հրաւէրով ժընեւ եկաւ ու պատրաստականութիւն յայտնեց ձգելու պարիզեան իր գործունէութիւնը եւ նուիրուելու մեր յեղափոխական աշխատանքներուն, հաստատուելով առժամապէս Կ. Պոլսոյ մէջ, իբրեւ պարիզեան թերթերու թղթակից: Գրիտափոր, որ Բազու էր (1901 թ.) շատ կը պնդէր նման ձեռնարկի մը կարեւորութեան վրայ եւ ատոր համար զբամական համեստ Փոնտ մըն ալ կը գումարէր Բազուի մէջ: